

ՊԱՅՄԱՆՔ

ՊԱՆԿԱՐՈՒ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Իրկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Ե Ի Կ

Ծանոցանակ տրոյր
20 ամսեայով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅՈՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոսթիւնք եւ
չեմ տրոսթիւ

ՎԵՐՋԻՆ ԶԵԿՈՅՑ

Մեր այն կտրուկ մը բաժանորդները՝ որոնք թերթիս տնօրէնին ձանրորդութեան միջոցին եւ նամակներով խոստացած էին մինչեւ տարեգոյնս իրենց պարտքը ԱՆՊԱՏՃԱՌ ԴՐԿԵԼ, բող հաձին գոնէ այս Յունուար ամիսը չբարձրէր անաչ խոստումսին կատարելը։ Հակառակ պարագային զանոնք մեզ խաբողներ պիտի նկատուէր եւ ինչ դիրքի տէր աշեղած ըլլալ, փետրուարի մեր առաջին թիւերուն մէջ գիրքեր յաւանքէ անոնցմէ պիտի նշանակուէր։ Այսպիսիները միանգամ ընդ միշտ համոզուելու եւ թէ թերթիս ամենօրեայ ծախքը միմիայն թափանցիկներովը կը գոցուի։ Իսկ թերթը տոտանալ ոչ չվճարելը ոչդղակի անոր գոյութեան դէմ դառնել։ մենք չը պիտի ներենք այդ կերպ վարչողներուն։

ԱՆՋԱՏ ՆԻԻԹԵՐ

Հայ եկեղեցիները

Մեր նախնիքս Թուով հրատարակեցին Սալմաստէն Նոր-Դարի ուղղուած թղթակցութիւն մը, որ այդ պատճառով մէջ հայ կոյսեր պղծող, կրօնի առեւանգող, սպանութիւններ եւ աւազակութիւններ ընող հայ եկեղեցիներուն ո՛ր խմբակներու պատկանած լինելը վերջապէս երեւան կը հանէր։ Նամակագիրը կրէր, այդ եկեղեցիները Ա. եւ Դ. խմբակներուն կը պատկանին, այսինքն Արմենական եւ Դաշնակցական եւ։ Յայտնի է թէ, ուստի գրաքննութեան խտրութեան պատճառաւ, Նոր-Դարի խմբագրութիւնը այդ երկու յեղափոխական կուսակցութեանց անուններուն միայն սկզբնատառերը գնելով բաւականացած է։

Ուստի հիմակ ինչպիսի պէտք եղածին չափ պարզուած է թէ, Սալմաստի հայ եկեղեցիները Արմենական եւ Դաշնակցականներ են։

Արմենականները շատոնց ի վեր Տ. Մ. Փոքրիւզեանի հետ ամենուրեքնէ գաղտնի են ու կազմակերպեալ մարմին մը չեն ներկայացներ։ ուստի իրենց վերագրուած ոճիւրները անհասական սխալագործութիւններ միայն կըր-

նան նկատուիլ, որոնց համար բուն ոճագործները անհաստատ պատճառներով են թէ՛ օրէնքի եւ թէ՛ հայ ժողովուրդին գաղափարներն առնել։ Մենք կրնանք, ատենք անսանձ չարագործներու խումբ մըն են։ հետեւաբար թէ՛ կառավարական եւ թէ՛ հաւաքական միջոցներով Սալմաստիք ոճագործները այդ կողմերէն անհետացնելու են խղճի ամենայն անդորրութեամբ, որպէս զի հայ գեղարարներ կենանք, ընտանեկան պատիւը եւ ինչքը փրկուի թէ՛ այդ հայ եկեղեցիներու ձեռքէն եւ թէ՛ ատենց պատճառաւ պարսիկ կառավարութեան կեղեքիչ պաշտօնեաներու ոտնձգութենէն։

Իսկ գաղով Դաշնակցական կոչուող եկեղեցիներուն ասոնք կազմակերպեալ կուսակցութեան մը անգամայն են, որոնց սխալագործութեանց պատճառներով Սալմաստի կը ծանրանայ իրենց պատկանած կուսակցութեան վարչականութեան կամ Պիւստիկութեան ու գոմիթէներուն վրայ։ Այս պատճառներով Սալմաստի թեմէն աղատելու համար Դրօշակ, իր պաշտօնական օրական նոյն կուսակցութեան, թող չի ջանայ փախուստի ծամրանք փնտռել, ինչպէս փորձած էր անկէ առաջ։ Իր նուիրական պարտականութիւններէն մին է այդ եկեղեցիներուն պատիւը պահանջել կուսակցութեան ձեռնհաս մարմինէն, որպէս զի ալ վերջ տրուի սխալագործութեանց արդէն չափէն աւելի երկարած չարքին, փրկուի հայ յեղափոխութեան անունը եւ ազատի ամբողջ գաւառը մը հայ ազգաբնակչութիւնը։

Հայկական ցուցահանդէս

Հայ եկեղեցիներու մասին վերի տըխուր տողերը փակելէ վերջ, գանք ուրախաբեր ձեռնարկի մը։

Սրտի բերկրութեամբ ստացանք ու մեր նախնիքս Թուով հրատարակեցինք Պիւստիկի մէջ կազմակերպուելիք Հայկական Ցուցահանդէսին յայտագիրը։ Մեր հայրենիքի սահմանները հեռոյնէն գերակշիռ դիրք ստացող Գերման կայսրութեան ոտանիքն մէջ սկըսուած այս ձեռնարկին կարեւորութիւնը երկար բացատրութեանց չը կարօտիր, երբ նկատենք թէ պետական ազգեցութեամբ եւ հաղորդակցական ու ջանասիրական միջոցներով Փոքր Ասիոյ տիրապետել սկսող գերման ազգը, ի բաց առեալ իր խիստ փոքր չափերէն Հայ ժողովուրդին տրոհատական ու մտային կարողութիւնները, ընդունակութիւնը, անցեալը ու ներկան, ինչ որ ա՛յնչափ կարեւոր է իրարու հետ շփման մէջ մտնել ուղղող տարրեր ազ-

գերու համար։ Գերմանները, քիչ բացառութեամբ, հայերը քրիստոնէայ թուրքեր (գէշ իմաստով) կարծելու չափ անտեղեակ են։ Գանի մը տարի առաջ բաւական շնորհով գերմանացի մը Ռուսիոյ Գոլէժէն յոյն աշակերտի մը հետ խօսակցելու միջոցին, ուշադրութիւնս դրաւ անոր արմատը ու զարմանքը երբ յոյնէն իմացաւ թէ այդ Գոլէժէն մէջ հայ բրօքէսէօններ կը դաստիարակեն։ մարդուն ապշուածութիւնը խիստ մեծ եղաւ երբ յոյնը աւելցուց թէ ուրիշ բազմութիւն հայ բրօքէսէօններ եւ սոցիալիստներ կը պաշտօնավարեն շատ մը բարձրագոյն հաստատութեանց մէջ, միայն գերմանացին «հայ բրօքէսէօններ, հայ սոցիալիստներ...» կրկնելով զարմացական անվերջ արտայայտութիւններ կընէր։ Ահա այս օրինակը բաւական է կարծեմ գերմանացիներուն հայրը ճանչնալու մասին ունեցած սգիւտութիւնը որակելու, միշտ բացառութիւնը յարգելով։

Պէրլինի մէջ կազմուելիք Հայկական Ցուցահանդէսը մեզ ճանչնալու մասին Գերմանացիներուն աչքը ծածկող քօղն է որ պիտի վերցնէ, ինչ որ մեծ կարեւորութիւն ունի մեզ համար, քանի որ Գերման ազգին համակրութեանը անհրաժեշտ պէտք ունինք։ Մարդ չճանչցած ու չգիտցած բանին չհամակրիր։ ծանօթութենէն է որ համակրութիւն կը բղթի։

Ցուցահանդէսին գոմիթէն՝ որ նշանաւոր գերմանացիներէ կազմուած է, հրաւիր կը կարգայ հայ արուեստագործներ, հնագէտներ, արհեստագործներ, բուսաբաններ եւ հարուստներ օժանդակութեամբ։ Հայ ազգը իր ամեն կողմերով պատշաճօրէն ցուցադրելու համար լաւ արհեստագործներ իրենց յաջող արտադրութիւններէն մէյ մէկ նմոյշ եւ հարուստներ մաս մը դրամ զրկելով այս հսկայ հայագետ ձեռնարկին սատարած կըլլան։ Իսկ եթէ անտարբեր մնանք գէշ սպաւորութիւն կը թողունք նոյնիսկ ձեռնարկութեան վրայ։

Օ՛հ, առիթն է որ քիչ մը շարժիք, խաղաղ միջոցներով ազգը փրկելու կուսակցիցներ։

ԳՈՐԴՈՒՅՑ

ՕՐՈՒՆԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՆՄԵՏ ԲԻԶԱ ՊԵՅ

Բ.

«Ահմէտ Ռիզա, գրած է Տիգրան Երկաթ իր Թուրքիան կրնա՞յ ապրիլ հո-

յակապ ուսումնասիրութեանը մէջ, քաղաքագէտ մը չէ՞։ Երբէք խօսքիւ գործերու չէ անցած։ անիկա՞յը կարծէ թէ դիւանագէտներու իմաստութիւնը, ու նոյնիսկ Ապտիւլ Համիտ իմաստութիւնը օր մը պիտի համոզուին իր ծրագրին արժէքին վրայ, որուն իրականացումը անոնց իսկ բարեացակամութենէն կսպասէ»։ (Թրվիլ sk Թրվիլ, 1899, Օգոստոս)։

Վաղադրաւ տաղանդաւոր հայ հրապարակագրին այս տողերը ինքը՝ Ահմէտ Ռիզա ամբողջութեամբ կը հաստատէր իր մէկ յօդուածին մէջ՝ զոր նոր տարիի առթիւ Մեշիկ-էյ հրատարակեց։ «Ես համոզուած հակառակորդ մը եմ, կըսէ, (Մեշիկ-էյ, 1 Դեկտեմբեր, 1902) բոլոր բանի միջոցներու, գործնական արտապահանջ ալ մէջ առնելով։ վաճառք եւ գանձութիւն չեմ նկատիր իր տեւական բարեկարգութիւններ բերելու կարող՝ գործնական ձեռնարկ մը։ Ես նոյնիսկ զանոնք իմ երկրիս համար վնասակար կը դասեմ։ Առ այսօր ինչ ընելու է ուրեմն, աշխատելու ենք ժողովուրդը իր իրաւունքներուն ու պարտականութիւններուն մասին իրականացնելու, սպասելով որ Ապտիւլ Համիտի մահը զայ մեզի լաւագոյն տիրապետութիւն մը բերելու»։

Ուրեմն, վերագրեալ հատուածներէ բացորոշապէս կը հետեւի թէ՛ Ռիզա դէմ է յեղափոխական, ապստամբական ունէ շարժումի, թէ նոյնիսկ այդպիսի շարժումներ թուրքիոյ շահերուն վնասակար կը նկատէ։ հետեւապէս, եւրոպայի մէջ Ռիզայի գործունէութեանը ոգին, հետապնդած նպատակը բռնի ուժով թուրք վարչութեան դէմ կռիւ մը պատրաստել չէ։ Ինչ է ուրեմն Ռիզայի հետապնդած նպատակը, արդեօք եւրոպական միջամտութիւն մը յառաջ բերել, ու Համիտը գահընկէց ընել։ Ընա՛ւ երբէք։ Ռիզա միշտ նշաւական է թրքական գործերու մէջ եւրոպայի մէկ ամենափոքր միջամտութիւն իսկ։ այս մասին անոր հայրենասիրական մտեւանդութիւնը Սուլթանն ալ՝ կը գերազանցէ, քանի որ նոյնիսկ թուրքիոյ կողմէ հանդիսաւորապէս ընդունուած եւ ստորագրուած Պիւստիկ Դաշնագիրը ու 1895 Մայիսի Յիշատակագիրը դատապարտելով կը դատապարտէ։ նոյնպէս, այս մտածմունքով էր որ Ռիզա բուն կերպով բողոքեց երեսփոխան ու Լահէյի Իրաւարար Ատեանին անդամ՝ Տէգուրէնէլ տը Գոնսթանի Բոս Արմենիայի մէջ հրատարակած մէկ նամակին դէմ, ուր Հալէպի կուսակալ էնիք բաշայի պաշտօնակութիւնը կը պահանջուէր։ Տիարպէթիւրի մէջ 30,000 հայ խողովող սուղ կուսակալի մը պաշտօնակութիւնը մէջ՝ Ահմէտ Ռիզա ամէն բանէ

առաջ օտարներու ձեռքով թուրք պաշտօնակարի մը պաշտօնակարութիւնը կը տեսնէր :

Ի՞նչ է , ի՞նչ կրնայ ըլլալ ուրիշն տարբերելի ի վեր թուրք գործունէութեանը շարժառիթը :

Ահմէտ Ռիզայի գրուած քննարկումն ուշադրութեամբ հետեւող մէկուն մը համար , գծաւոր պիտի չըլլար այդ գործունէութեան ոգիին թափանցել . Ահմէտ Ռիզա , իբր թուրք , չափազանց հայրենասէր ու անհաշիւ հիւանդ հայրենասէր մըն է . բայց միւս կողմէ վերջին ծայր ալ ճարպիկ է . Ռիզա տեսած է թէ բացէ ի բաց եթէ հայկական ջարդերը գործադրող իր թուրք հայրենակիցները պաշտպանէր ու անոնց մարտամղութիւններն արդարացիւ վերջէր , իր անկեղծութիւնը տարակոյսի կենթարկէր ապահովագէտ , — երբ մանաւանդ եւրոպացի հեղափոխական եւ ուղեւորներ գործուած խժոժութիւնները մանրամասնօրէն պատմած կամ հաստատած են : Ուստի , Ռիզա միջին ճամբայ մը ընտրած է , որ միանգամայն կրնայ թէ՛ իր արեւելեակ հայրենակիցները ազատօրէն պաշտպանել , եւ թէ՛ ինչպիսի կոտորածները դատապարտող եւրոպացիներու դիւրագիտութեամբ : Ռիզա կը կեղծէ ինքն ալ կոտորածները դատապարտել , թէ եւ մերթ տարօրէնակ հակառակութեանց մէջ ինչպէ . միայն թէ անսովոր ուժգնութեամբ մը բոլոր եղած այդ չարիքներուն , բոլոր ըլլալիք չարիքներուն պատասխանատու ցոյց կուտայ Սուլթան Համիտը . Ռիզայի հասկացողութեամբ , Համիտի մահովը ամէն բան կը վերջանայ , ամէն բան վերադառնալիք կը մտնէ . ուրիշն պէտք է Համիտի մեղքներուն սպասել , ու ապրտամբութենէ զուտանալ . ինչո՞ւ . վաճառ զի , «Պատմութիւնը կը սորվեցնէ թէ եւրոպական տեսէ միջամտութիւն արեւելքի մէջ անհրաժեշտօրէն քրիստոնեայ տարրերը կը պաշտպանէ , ու Օսմանեան կայսրութեան կազմալուծութիւնը կը պատրաստէ» . (Մեշիկեթ , Դիկտեմբեր 1) :

Մինչեւ Համիտի մահը եթէ եւրոպական միջամտութիւն մը տեղի ալ ու-

նենար , օգտուողները քրիստոնեաները պիտի ըլլային . ահա այս միջամտութիւնը արդիւնէն միայն կը ձգտի Ռիզայի գործունէութիւնը : Ու Ահմէտ Ռիզա միշտ ջանացած է ցոյց տալ թէ թուրքերը Հայերուն չափ ու աւելի իսկ համբաւական վարչութիւնէն կը հեծեծեն , ու թուրքիան բարեկարգելու տեսական միակ միջոցը , առանց ցեղի ու ազգի խտրութեան , ընդհանուր բարեկարգութեանց մէջ է :

Տ. Է.

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՍՍՔՆ ԱՌԵՐՈՊԱ

Թ.

Արդարութեան այս տիրապետութիւնը մեր բոլոր բաղձանքներուն տանէն պայծառ իսկալն է : Մենք չենք միայն երիտասարդ թուրքեր , ձեր հայրենակիցներ , համոզուած յառաջդիմասէրներ : մենք ամեն բանէ առաջ Հազգի ճշմարիտ երկրպագուներն ենք , մենք կը կազմենք Հազգի ժողովուրդը , էնպիսի Հազգի . մենք կողորինք Հազգի կայսրութեան համար , այսինքն բանականութեան , ճշմարտութեան , արդարութեան , յառաջդիմութեան ու տիեզերական ազատագրութեան գահակալութեանը համար :

Մենք կընդունինք բոլոր ժողովուրդներու , բոլոր լեզուներու , բոլոր վարդապետութեանց , այդարտութեան պահանջներուն համաձայն , ազատօրէն զարգանալու իրաւունքը :

Մենք չենք փնտրեր . մենք չենք ընդունիր ոչ մէկ նուաճում , բացի խաղաղութեան թշնամիանքով ու միշտ արդարութեան կայսրութեանը ներքեւ եղածէն :

Գալով մեր ուղղակի տիրապետութեանը ներքեւ եղած հաւասարութեան , մենք այսօր միակ , այլ վճռական պայման մը կը գնենք . այդ ալ պաշտելն է գերագոյն էակը , միակ Աստուծը , ու անոր յաւատեանական օ-

րէնքներուն բարիքները մեզի բերող առաքեալները յարգելը :

Ու այս հիմնական կէտին առթիւ , պարտաւոր ենք ձեզի յիշեցնել թէ , մեր կրօնական հաւատալիքներու Ողբիմարիտ մէջ , Յիսուս կը գրաւէ նոյնքան բարձր տեղ մը , զոր ամենէն խանգաղապաշտամունքը երեւա կայել կարող էր :

Հետի ընդունելի թէ երբէք խաչուած ըլլայ , մենք կը հաւատանք թէ անիկա կենդանի երկինք բարձրացաւ : Գոռանը բարոյականի այդ վսեմ քարոզչին Աստուծոյ հոգին անունը կուտայ . ալ ի՞նչ կարելի է աւելցնել :

Գալով մեր Մուհամմէտ մարգարէին , զոր ձեր եկեղեցիներուն պաշտօնաւէր թշնամանքը այնքան ալաւեւած է , բարեբախտ ենք տեսնելով որ ձեր բարձր մտքերը անոր գործին մեծութիւնը ճանչնալու կոսիսին : Ձեր զգուշի ռոտացիներուն մէջ , անոնք կը տեսնեն խորամիտ օրէնսդիրը , երկրակալ քաղաքագէտը , անբաղդատիկ նկարագիրը , ձեր բոլոր մեծ մարգարէներուն ամենէն արտակարգ ու ամենէն անթիքի տիպարը :

Ինչո՞ւ թող տալ որ ձեր կոյր քահանաները զան զայն հրապարակաւ թշնամանելու միջոցէ հաւատքով բարոյական մեր ժողովուրդներուն մէջ , որոնք անոր պաշտօնին փառքին համար զոհուելու միշտ պատրաստ են :

Մենք գիտենք թէ , սահմանափակ մտքեր , դարաւոր նախապաշարմանց մէջ կաշկանդուած , կը կարծեն իրենց հոգին փրկել՝ աշխարհ իրենց բռնական ալաւիզակ կոխներովը խաղաղելով : Թողունք զանոնք իրենց երանիկ պատրանքներուն մէջը : Մենք հոս կը խօսինք միայն այն իմացականութեան , որոնք կուզեն տեսնել , ու կրնան մեզի ալ հասկնալ :

Ձեզի եւրոպայի ընտրեալ դասակարգը , ձեր նախարարներուն , գիտուններուն , ազգայն նախատեսողներուն , յառաջդիմութեան սուրբ զատին բոլոր զինուորներուն կողմէնք մեր ժողովուրդներուն իղձերուն վերջին արտայայտութիւնը :

30) միլիոն մարդիկ , նոյն կապով

միացած , Նախախնամութեան մատուցող զէպի նոյն հպատակը կառաջնորդուին :

Նպատակ վսեմ , քաղաքակրթութիւն լայն , չեղոք , աշխարհական , տիեզերական , ինչպէս մեր Աստուածը մեզի կը հրամայէ ու ինչպէս աշխարհի խաղաղութիւնը ձեզմէ կը պահանջէ :

Մեզի անկ չէ թէ ձեզի ցոյց տանք ձեր միջոցներուն զօրութիւնը ու ձեր խղճատանքին պարտականութիւնները : Միայն վայրկեան մը խորհեցէ՛ք այն անվերջ բզկտումներուն վրայ , այն անորակելի գէշութեանց վրայ , որոնք զարկէ ի վեր՝ երկրագունդէն ամենէն զեղեցիկ մասերը արցունքներով կը համակեն , ու ըսէք մեզի թէ եղեռնագործութիւն մը պիտի չըլլա՞ր թողութիւնը որ բուխեցաւ մարդկութիւնը սարսփեցնելու կարողաւորութիւնը ու աղէտներու նոր յաջորդութիւնը մըն ալ պատրաստուին :

Ձեր պատասխանը ինչ որ ալ ըլլայ , մեր բախտը սակէ ետք կընուած է հետեւեալ երկնային երկու վճիռներով :

Աշխարհի զխաղաղութեան բոլոր յառաջդիմութեանց համար անկեղծ պաշտամունք , բարեբախտիկ մա՛ ձեր միակ ներողամտ ու ողորմած Աստուծոյ պաշտումին համար :

ՇէճՆ ԱՊՊՏԻԼ-ԶԱՔ ՊԱՆՏՏՏԻ
(Լա Ռելիլ)
ՎԵՐՋ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայ. եկեղեցւոյ առաջին լուսաւորիչներու , թաթէզու եւ Բարթողիմէոս առաքեալներու տօնին առթիւ , Ճիւղարանի Հանդիսարահին մէջ բառ սովորութեան հանդէս տեղի ունեցած է . երգեցիկ խումբը երգած է ընդմիջաբար , կրօնատա վ.ի առաջնորդութեամբ :

— Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս՝ Տ. Սահակ եպիսկ. յա-

Ա. ԵՐԵՎԱՆԵԱՆ

(47)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԻՐ

ԱՌԱՔԵՆ ԷՓԵՆՏԻՆ

Իրիկուան դէմ , երկու պահանջներու առաջնորդութեամբ մինչեւ փոքրցին անկեղծ գնաց : Երբ պահանջները թողուցին զինքն ու հեռացան , Առաքել էֆէնտին կերկրուն քայլերով հազիւ հազ իր սունը հասաւ :

Վեր ելաւ ու առանց խօսք մը ընելու իր սնեակը մտաւ :

Ժամերով , Ժամերով ման եկաւ իր սնեակին մէջ , որչափ որ ուժ մնացեր էր իր վրան եւ որչափ որ կրնար քայլել :

Դիչելուան ստուերները թանձրանալու մօտ էին :

Առաքել էֆէնտին ալ յորհած էր . . . ալ չէր կրնար ոտք վրայ կենալ . ուստի նստեցաւ սեղանի մը քով ու սկսաւ մտածել :

Ի՞նչ եղած էր իրեն . . . Ի՞նչ անցած էր իր գրէտին . . . Ի՞նչ վիճակի մը մէջ ինչպէս էր ինքը :

Ձէր գիտեր . . .

Ձէր յիշեր :

Միայն թէ իր երեւակայութեան առջեւ կը պատկերուէր երիտասարդ մը , որ պաշտօնատան տախտակամէն վրայ ինչպէս , անզգայ եղած ու գիտի մը դարձած կը մնար :

Երիտասարդ մը՝ զոր ծանցած էր . . .

Երիտասարդ մը՝ որ իր մէկ հատիկ որդին էր :

— Հետե՛ւ , հետե՛ւ աչքէս . . . չեմ կրնար համբերել . . . չեմ կրնար հանդուրժել , կը գոչէր Առաքել էֆէնտին : Հո՞ն է , առջի՛ն է . . . գիտնին վրայ կը տապալակի . . . արեւնեկր՛ւ մէջ է ան . . . կը պաղտափ , բայց չեմ լսեր ես , կարտասուէ , սակայն քար կարած է իմ սիրտս . . . Ձէ , չէ . . . մինչեւ իսկ խղճիս ձայնը խղճեցի . . . մինչեւ իսկ Աստուծոս ուրացայ ու այնպէ՛ս մասնեցի որդիս . . .

Առաքել էֆէնտին իր մեղաւորութիւնը չչարուհակեց , այլ ձեռքն առաւ զբիշն ու անա՛ ինչ որ գրեց .

«Թշուառ կի՛նս ,

«Տարինքէ ի վեր ուրիշներու արիւնը մտնելով «ապրեցար ու մասնութիւններու արիւնքով հաղ-«ուեցար . . . ասիկա պիտի ըլլա՞ր ու մի ցաւի վրայ . . . «Յետոյ՝ ձեռքս զաւակիդ արեւան մէջ թաթիսով ըլ-«ւարուաւ ու անպիտանկարար կառավարութեան մատ-«նեկուս համար զինքը՝ անիծէ՛ զիս . . .

«Միտա-լարս՛ով . . . » :

Անձնատարան էրիկ

Առաքել

Ու գրութիւնը սեղանին վրայ նստելով , մեքենաբար ոտքի ելաւ , զրոյց մը դուրս քաշեց ու ձեր-

մակ կոթ ունեցող վեց-հարուածը ձեռքն առաւ :

Առանց սպասելու , վեց-հարուածը բերին մէջ զրաւ ու բլթակը ուժգնապէս քաշեց :

Պայթիւն մը ամեն բան վերջացուցած էր :

Առաքել էֆէնտին արեւան ճապաղեցնելու մէջ ինչ կած էր ու զանկը բոլորովին տարտղնած էր :

Մահը վայրկեանական եղած էր . . . :

ՉԼԻ-ՉԱՓ ԼԵՌԱՆ ԿՈՒՐԷ

Հայոց Ձորի ընդարձակ ու հրաշագող հովտին մէջ , դէպի արեւելեան հարաւը , լեռի ու ցած ըլլալի մը սակ էր մէկի անուշով գիւղ մը կար , որուն մեծ մասը քուլտ էր :

Այդ գեղին մէջ Շէյխ մը կը բնակէր որ չափազանց մեղեանդ ու հայատկաց նկարագիր մը ունէր :

Չուայելով որ ութսունն անցած տարիքը ծանրացած էր ուսերուն վրայ , չուայելով որ աչքերու լոյսը մարած էր , չուայելով որ ամբողջ կեանքամեքը հալած , աւերած ու վարչելի երեւոյթ մը առած էր , զարձեալ անբարոյական մասնուէր չէր հեռացուցած իր հոգեւոյն խորէն : Իր սիրտը մնած էր անարդ որդի մը պէս , որ սիրովեւ մէջ կը տապալակի ու անկից դուրս չապրէր վայրկեան մը :

Բոլոր գիւղը Շէյխինն էր : Հոն չկար մէկը , որ իր ստացուածքին տէրն ըլլար : Ասիկա բաւական չէր . նո՛յնիսկ զարչատիպ Շէյխին կը պատկանէր ամենէն զեղեցիկ սեւը . . .

Ո՞վ կրնար ձայն հանել . . . ո՞վ կրնար բողբոջ :

